ՄԸՅՐ ԷԹՈՒՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

«ՎԱՀԱՆ ԵՎ ԱՆՈՒՇ ՇԱՄԼՅԱՆ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՑԱՐԱՆԻ ՀԻՄՆՈՐՀՆԵՔԸ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ Գևորգյան Մեմարանի սաների համար կառուցվող նոր կացարանի հիմնաքարի հանդեսը: Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը օրհնեց ապագա շենքի 4 հիմքերը՝ «Զի եղիցի կառուցումն սորա խաղաղութեամբ և յաջողութեամբ»:

Հիմքերից մեկում Վեհափառ Հայրապետը տեղադրեց մի հուշագիր՝ վկայությունը հիմնաքարի ու տեր և տիկին Վահան և Անուշ Շամլյանների բարերարության, որի շնորհիվ էլ կառուցվում է նոր կացարանը: «Եղան հիմունս հանրակացարանիս կոչեցեալ «ՎԱՀԱՆ ԵՒ ԱՆՈՒՇ ՇԱՄԼԵԱՆ», Գէորգեան Հոգևոր Մեմարանիս ի Ս. Էջմիածին, ի թուին Հայոց ՌՆԽԶ և յամի Տեառն 1997 ի չորրորդ օր ամսեանն հոկտեմբերի, ի Հայրապետութեան Տեառն Տեառն Գարեգնի Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց»:

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Գևորգյան Հոգևոր Մեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողությունը, Սբ. Էջմիածնի ճարտարապետական խորհրդի անդամները և Էջմիածնի քաղաքի հավատացյալ բնակիչները:

Բարձր գնահատելով հեռավոր Ֆրեզնոյում բնակվող Շամլյանների բարերարությունը, Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ դեռևս անցած տարի, սեպտեմբերին, լինելով Սբ. Մյուռոնօրհնեքի կնքահայրը, պրն. Շամլյանը որոշեց «առ Աստված արժեցնել իր կնքահայրությունը՝ ազգին և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին ընծայելով այս շենքը 1 մլն. դոլլարի նվիրատվությամբ»: Ի պատիվ բարերարների, կացարանը կկոչվի Վահան և Անուշ Շամլյանների անունով:

Եռահարկ այս կացարանը նախատեսված է 120 ուսանողների համար: Շենքի ճարտարապետն է Մայր Աթոռի գլխ. ճարտարապետ Արծրուն Գալիկյանը: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ նոր կացարանի բարեկեցիկ պայմանները կնպաստեն ուսանողների ուսման առաջադիմության բարձրացմանը, հոգևոր կյանքի և ծառայության ամրապնդմանը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՑՐ ԱԹՈՌԻ